

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 7-ԻՆ
ԺԱՄԸ 11:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի պաշտոնակատար
Գ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատար
Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Հ. Բեգլարյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Բաղայան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար

Հրավիրվածներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
-------------	--------------------------------------

Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Է. Ավետյան	ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական կառավարման կենտրոն» պետական հիմնարկի տնօրեն
Ա. Սարգսյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար
Ք. Ղալեյան	«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի իրավաբան

1. Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) առաջին ենթահատվածի արտաքին մոնիթորինգի համապատասխանության հաշվետվության վերաբերյալ

(Հ. Բեգլարյան, Գ. Բեգլարյան, Հ. Թովմասյան, Կ. Արեյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Տրանշ-2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի Հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) առաջին ենթահատվածի իրականացման վերաբերյալ անկախ մոնիթորինգի գործակալության (ԱՄԳ) հաշվետվությանը.

2) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարի պաշտոնակատար Հ. Թովմասյանին՝ քննարկել իրացման գոտում գտնվող քաղաքացիների փոխհատուցման գումարների հարկման հետ կապված՝ գերակա հանրային շահ ճանաչելու ժամկետի ավարտի արդյունքում ՀՀ օրենսդրությամբ փոխհատուցման գործընթացի նկատմամբ կիրառելի հարկերի չգանձելու հարցը և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն.

3) հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատար Գ. Բեգլարյանին՝ ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ քննարկել պայմանագրային պարտավորությունների կա-

տարման հետ կապված առկա խնդիրները, այդ թվում՝ տեղեկացնելով հետագայում պայմանագրի հնարավոր լուծման մասին և արդյունքները զեկուցել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

4) հանձնարարել ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնակատար Վ. Գարրիելյանին՝ վարկային համաձայնագրի պահանջներին համապատասխան ԱԶԲ-ին ներկայացնել հավաստագիրնամակ:

2. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի գնումների պլանի փոփոխության վերաբերյալ:

(Ա. Սարգսյան, Գ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի գնումների պլանի փոփոխությունը:

2) Հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատար Գ. Բեգլարյանին՝ ԾԻԳ-ի և ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել ԾԻԳ-ի կադրային կարողությունների ընդլայնման հարցը և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

3. ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի N 968-Ա որոշմամբ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության իրականացման նպատակով նախատեսված սահմանափակումները մասնակի հանելու վերաբերյալ

(Հ. Բեգլարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի պաշտոնակատար Գ. Բեգլարյանին՝ բացառությունները, ըստ անհրաժեշտության, ներկայացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրերի կառավարման խորհրդի քննարկմանը և հավանության արժանանալու դեպքում դրանք ներակայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

4. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի տրանշ 1-ի (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում հայտարարված մրցույթի մասնակից աուդիտորական կազմակերպությունների կարճ ցուցակի և առաջարկ ներկայացնելու հրավերի (RFP) քննարկում և հաստատում

(Ա. Բաղայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց հաստատել Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1 (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի շրջանակներում հայտարարված մրցույթի մասնակից աուդիտորական կազմակերպությունների կարճ ցուցակը և առաջարկ ներկայացնելու հրավերը:

5. Հայաստանի Հանրապետությունում Ասիական զարգացման բանկի պորտֆելի ամփոփման փաստաթղթում ներկայացված խնդիրների («status» սյունյակ՝ Potential Problem) քննարկում

(Ա. Բաղայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բաղայանի կողմից ներկայացված տեղեկատվությունը.

2) հանձնարարել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, ծրագրի ղեկավար Ա. Բաղայանին՝ ԱԶԲ-ի ներկայացուցիչների հետ քննարկել ծրագրի կառավարման և ինստիտուցիոնալ անրապնդման խորհրդատուի հետ պայմանագիր կնքելու արդյունքում ծրագրի կարգավիճակի փոփոխության հարցը:

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Հ Ա Ր Ց

6. 2013 թվականի մայիսի 2-5-ը կայացած ԱԶԲ-ի տարեկան համաժողովի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

(Կ. Մինասյան, Ա. Բաղայան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատարի առաջին տեղակալ Կ. Մինասյանի՝ 2013 թվականի մայիսի 2-5-ը կայացած ԱԶԲ-ի 46-րդ տարեկան համաժողովի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ (ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇ-
ՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՆՏ ԲԵԳԼԱՐՅԱՆ